Հավելված N 1
ՀՀ կառավարության 2019 թ.
մայիսի 23-ի N 646 -Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Նյու Իդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հանքային ջրի արդյունահանման և շշալցման գործարանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Ծրագրի նկարագիր 4
Իրավական մաս 6
Ապրանքի թողարկում և սպառում 7
Ռազմավարություն և իրականացում 8
SWOT վերլուծություն 10
Ֆինանսական պլան 12
Պարտավորություններ և դերաբաշխում 13

Նախաբան

Ծրագրի նկարագիր	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի արդյունահանման և շշալցման գործարանի կառուցում:
Ոլորտ	Մշակող արդյունաբերություն
Բյուջե	≈ 5 մլն ԱՄՆ դոլար
Ներդրումների տեսակը	Մասնավոր
Ստեղծվող աշխատատեղի քանակ	30≈50

Ծրագրի նկարագիր

Սույն ծրագրի շրջանակներում «Նյու Իդա» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) նախատեսում է կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերի հանքային ջրի արդյունահանման և շշալցման գործունեություն:

Գործունեության իրականացման՝ հանքային ջրի շշալցման կազմակերպման նպատակով, ընկերությունը նախատեսում է նշյալ համայնքի տարածքում կառուցել ժամանակակից սարքավորումներով հագեցած գործարան, որը թույլ կտա բարձր որակական հատկանիշների պահպանմամբ թողարկել համապատասխան արտադրանք:

Ըստ ծրագրի՝ գործարանի կառուցման համար նախատեսված տարածքը, ընդհանուր առմամբ, կլինի շուրջ 4 հա, որից.

- 1.3 հա՝ սեփականության իրավունքով արդեն իսկ պատկանում է «Նյու Իդա» ՍՊ ընկերությանը, հողակտորը գնվել է մասնավոր երրորդ կողմից,
- 2.7 հա՝ հանդիսանում է համայնքային սեփականություն, ինչը ըստ նախնական քննարկումների հնարավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել ընկերության կողմից:

Առաջին փուլի համար ընկերությունը նախատեսում է կառուցել 3000 քմ տարածքով արտադրական և պահեստային տարածքներ, ինչպես նաև օժանդակ կառույցներ: Հետագայում նախատեսվում է կառուցել ևս մի քանի արտադրամաս՝ արտահանման ծավալի պահանջները բավարարելու համար:

Գործարանի նախագծման աշխատանքներն արդեն իսկ մեկնարկած են:

Նշյալ հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի հանքային ջրի դեբիդը երկուսը միասին կազմում է մոտ 4.9 լ/վ, ինչը լիովին բավարարում է ընկերության կողմից նախատեսվող արտահանման ծավալների համար: Առաջին փուլի համար նախատեսվում է շշալցնել ժամում 12000 շիշ արտադրական հզորությունով, իսկ հետագայում նախատեսվում է ավելացնել ժամում 24000 շիշ արտադրական հզորություն ունեցող սարքավորումներ: Գործարանում նախատեսված արտադրական սարքավորումները լինելու են չինական արտադրությամբ:

Գործարանի կառուցումը և լիարժեք շահագործումը թույլ կտա ապահովել մոտ 30-ից 50 նոր աշխատատեղի ստեղծում, որի հիմնական մասնաբաժինը տեղական բնակչության հաշվին:

Իրավական մաս

ՆՅՈՒ ԻԴԱ	
Կազմակերպական-իրավական ձև	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Գրանցման ժամկետ	08.12.2017
Գրանցման համար	271.110.996909
ՀՎՀՀ	01279354
Հիմնադիրներ	Չեն Ժոնգ (քաղաքացիություն՝ ՉԺՀ) Լուո Գանգ (քաղաքացիություն՝ ՉԺՀ) Շենգ Լի (քաղաքացիություն՝ ՉԺՀ)

Ապրանքի թողարկում և սպառում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տարեկան կտրվածքով թողարկել շուրջ 30 000 000 լիտր հանքային ջուր։

Ջուրը շշալցված կլինի ըստ հետևյալ տեսակի տարայի և ծավալի.

- ապակի՝ 0.33 լ. և 0.75 լ.

Ծրագրի շրջանակներում կառուցվող գործարանի թողարկած արտադրանքն ամբողջությամբ ենթակա է արտահանման դեպի ՉԺՀ և այլ երկրներ, որտեղ ընկերության հիմնադիրներն արդեն իսկ ունեն նախնական պայմանավորվածություններ՝ դրա ամբողջական սպառման վերաբերյալ։ Հարկ է նշել, որ ընկերության հիմնադիրները ՉԺՀ-ում ունեն իրենց խոշոր ընկերությունները՝ ալկոհոլի արտադրության, վաճառքի, հասարակական ջերմամատակարարման և այլ ոլորտներում։

Ընկերության հիմնադիրների կողմից արդեն իսկ իրականացվել է շուկայի վերլուծություն, ինչպես նաև մշակվել է իրացման արդյունավետ գործողությունների ծրագիր և մարքեթինգային քաղաքականություն։

Վերոնշյալից ելնելով, ընկերության կողմից թողարկված արտադրանքը չի հանդիսանա Հայաստանում գործող և ՀՀ տարածքում սպառում իրականացնող նմանատիպ կազմակերպությունների մրցակից։

Միաժամանակ, հայկական հանքային ջուրը չինական շուկայում կարող է բարձր մրցակցային դիրքեր ապահովել իր որակական հատկանիշների շնորհիվ։

Նախնական աշխատանքային փուլում արդեն իսկ մշակվել է շշի դիզայնը և ներկայանալի անվանումը, որի նպատակն է սպառողին անմիջապես ներկայացնել հայկական հանքային ջրի որակական հատկությունները:

Ռազմավարություն և իրականացում

Ինչպես յուրաքանչյուր տեսակի գործարար նախաձեռնության իրագործման համար, այնպես էլ սույն ծրագրով աշխատանքների իրականացումը ունի իր միջոցառումների ժամանակացույցը:

Նշված միջոցառումների ծրագրով սահմանվում են իրականացվող աշխատանքների փուլերը և նախնական ժամկետները, մասնավորապես.

Միջոցառում	**Ժամկետ**
տարածքի ձեռքբերում	2019 թվական III – րդ եռամսյակ
ՀՀ օրենսդրությամբ սահմանված թույլտվությունների ստացում	2019 թվական II – III-րդ եռամսյակ
շինարարական նախապատրաստական աշխատանքներ	2019 թվական III -րդ եռամսյակ
Շինարարություն	2019 թվական III -րդ եռամսյակ
սարքավորումների ներմուծում,	2019 թվական IV -րդ եռամսյակ

տեղադրում և կարգավորում	
տարածքի բարեկարգում	2019 թվական IV-րդ եռամսյակ
արտադրության մեկնարկ	2020 թվական I-ին եռամսյակ

Նշված աշխատանքներից բացի, ընկերության կողմից տարբեր փուլերին զուգահեռ կիրականացվեն նաև աշխատակիցների հավաքագրման և վերապատրաստման ուսումնական ծրագրեր:

Գործարանի շահագործումից ի վեր ընկերության հիմնադիրները իրենց պատրաստակամությունն են հայտնել մշտապես մասնակցել համայնքի սոցիալական և բարեգործական ծրագրերին: Աջակցել տեղի բնակչությանը իրականացնել հասարակական, կրթական, մշակութային ծրագրեր ի նպաստ համայնքին:

SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• որակյալ ջրի առկայություն, • ֆինանսական ռեսուրսների առկայություն, • իրացման շուկայի՝ նախնական պայմանավորվածությունների առկայություն, • տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի աջակցություն, • ՀՀ կառավարության քաղաքականության հետ համապատասխանելիություն՝ նոր աշխատատեղերի ստեղծման և արտահանման ծավալների ընդլայնման տեսանկյունից	• ծրագրի իրագործման համար նախատեսված տարածքում ենթակառուցվածքային բացեր, մասնավորապես, ճանապարհ և գազամատակարարում:
Հնարավորություններ	**Ռիսկեր**

• ՉԺՀ շուկայում հայկական արտադրանքի ներկայացվածության ապահովում, որպես բարձրորակ ապրանք, • ընկերության կողմից համայնքի սոցիալական ծրագրերում մասնակցություն, • համայնքի հարկային եկամուտների ավելացում, • տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում	• գործարանի համար նախատեսված տարածքի ձեռքբերման խոչընդոտներ, ջրի արդյունահանման իրավունքի ձեռքբերման խոչընդոտներ, նոր հորատանցք հորատելուց հետո ջրի բացակայություն կամ ջրի որակի կորուստ, քանի որ հորերը գտնվում են անսարք վիճակում, • արտարժույթի կտրուկ տատանումներ, • հարկային և մաքսային քաղաքականության կտրուկ փոփոխություններ

Ֆինանսական պլան

Ծախսային ուղղություն	**Գումար, ՀՀ դրամ**
Ջրահավաք հորատանցքի նախապատրաստական և սպասարկման աշխատանքներ	54,500,000
Վարչա-արտադրական համալիրի կառուցում	1,300,000,000
Սարքավորումների ձեռքբերում և տեղադրում	800,000,000
Տարածքի բարեկարգում	16,000,000
Պետական տուրքեր և վճարներ	5,500,000
Այլ ընթացիկ ծախսեր	224,000,000
Ընդամենը	2,400,000,000

Պարտավորություններ և դերաբաշխում

ԿՈՂՄ	ԳՈՐԾԱՌՈՒՅԹ
«Նյու Իդա» ՍՊԸ	Ներդրումային ծրագրի իրականացնող
ՀՀ Լոռու մարզպետարան	ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավասության սահմաններում աջակցություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ